ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արամ Սիմոնյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арам Симонян (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Вирабян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Aram Simonyan (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 6
Оганнес Хорикян, К ВОПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ
Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA
Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ 14
Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE
Արգիշտի Վարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ 24
Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА 33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-XI Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 48
Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒԹՈՒՎՎԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) 55
Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՒՐԸ 63
Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR
Հովիկ Գրիգորյան, ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) 77
Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)
Վանիկ Վիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ. 95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА 137
Վալերի Թունյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ և ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 158
Рафик Наапетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ 166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. 174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019
Արման Եղիազարյան, Ալիկ Ղարիբյան, Դիանա Դավթյան, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 191
Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 200
Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ 206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА
Haikaz Hovhannisyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ 214
Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ
Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
РЕЦЕНЗИЯ / REVIEW

Փայլակ Ենգոյան, էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ուհամալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.»), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: 222

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ 224

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 226
INFORMATION ABOUT THE AUTHORS 228

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 230
NOTICE FOR THE AUTHORS

Դիանա Հայրապետյան

ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒԹՈՒՎՎԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.)

Բանալի բառեր. Օսմանյան կայսրություն, բռնի իսլամացում, ֆութուվվաթ, ուծացում, ախիական միաբանություն:

Օսմանյան կայսրության պատմության ընթացքում ուծացումը կամ իսլամացումը տարբեր դրսևորումներով և ծավալներով եղել են էթնոքաղաքականության բաղկացուցիչներից: Ինչպես նշում է թուրքագետ Լ. Սահակյանը՝ բռնի իսլամացման քաղաքականությունը իրականացվել է երեք փուլով՝ XV-XVII դդ., XVIII-XIX դդ. և XIX դ. սկզբից մինչև XX դ. կեսերը: Հավելենք, որ ժամանակակից Թուրքիայում ևս կարող ենք հանդիպել բռնի իսլամացման զանազան դրսևորումների: Ուծացման քաղաքականության յուրաքանչյուր փուլի կենսագործման ընթացքում օսմանյան իշխանությունները հետապնդել են տարբեր նպատակներ[1]: Բռնի իսլամացման քաղաքականության իրականացման ընթացքում օսմանյան իշխանությունների անթիվ ու անհամար վայրագությունների մասին փաստում են թե՛ բազմաթիվ հայկական սկզբնաղբյուրներն ու հիշատակարանները և թե՛ օտարերկրյա դիվանագետները: Իսլամացումը բազմաթիվ դեպքերում պարտադրվել է «կամավոր» սկզբունքներով. ստեղծվում էին սոցիալ-տնտեսական այնպիսի ծանր պայմաններ, որոնցից դուրս գալու միակ ելքը իսլամի ընդունումն էր: Թուրք պատմաբանները, շրջանցելով Օսմանյան կայսրությունում տիրող սոցիալական, քաղաքական կամ բարոյահոգեբանական սոսկալի պայմանները և քրիստոնյաների նկատմամբ կիրառված ճնշումները, այդ փաստերը ներկայացնում են որպես վերջիններիս կամավոր իսլամացում[2]:

Օսմանյան կայսրությունում շարիաթի հենքի վրա տեսականորեն ընդունված էր բոլոր հպատակների իրավահավասարության սկզբունքը, բայց գործնականում այն կիրառվում էր միայն մուսուլմանների պարագայում: Ոչ մուսուլմանները գտնվում էին իրավազուրկ կարգավիճակում: *Ռայան* կամ *գյավուրները* (թուրք.՝ raya/reaya - սուլթանի հպատակ ոչ մուսուլման, քրիստոնյա)[3] չէին մասնակցում երկրի ղեկավարման գործընթացին և զինապարտ չէին: Ոչ մուսուլման հարկատու հպատակները կայսրության արհամարհված իրավազուրկ տարրերն էին, որոնք թերևս կարևորվում էին միայն տնտեսական առումով, քանի որ վճարում էին բազմապիսի չարդարացված՝ պետական և սովորութային հարկեր[4]: Ոչ մուսուլմանների համար սահմանված էր *ջիզյե* (գլխահարկ) հարկատեսակը, որը տեսականորեն նրանց տալիս էր ազատ դավանանքի իրավունք, սակայն ամենևին չէր ապահովագրում կրոնական մոլեռանդությունից բխող բռնություններից և անհանդուրժողականությունից: Բացի կամայական հարկատեսակներից *ռայան* ենթարկվում էր նաև պարբերական կեղեքումների և թալանի, քանի որ Օսմանյան կայսրությունում առհասարակ գոյություն չուներ անձի կամ ունեցվածքի ապահովություն: Պետական ու զինվորական խավը զբաղվում էր տևական թալանով, իսկ կամայականությունների զոհը առաջին հերթին և մեծ մասամբ դառնում էր *ռայան*[5]:

Որպես մուսուլմանների բարոյահոգեբանական ճնշման դրսևորման միջոց փաստենք, որ ոչ մուսուլմանները պարտավոր էին նրանցից տարբերվել անգամ հագուկապով: Առկա են բազմաթիվ հիշատակություններ, երբ հանդերձանքի պատճառով մարդիկ պատժվել են: Այսպիսով, բռնի իսլամացումը, որի եղանակները կիրառվում էին թե՛ անհատական և թե՛ զանգ-

[*] *Հոդվածը ներկայացվել է 14.11.2019 թ., գրախոսվել է 10.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:*

[1] Տե՛ս Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Ե., 2006, հ. 4, էջ 217-218:

[2] Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանության արարք, Ե., 2015, էջ 8-9:

[3] Հմմտ. Баскаков А. Н., Турецко-русский словарь, Москва, изд-во “Русский язык” 1977, с. 732:

[4] Տե՛ս Սիմոնյան Հ., Թուրք բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986, էջ 95:

[5] Տե՛ս Անասյան Հ., Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, N 5, էջ 60 :

վածային միջոցներով, հայ ժողովուրդը անվանել էր «տաճկացում», ինչը նշանակում էր թուրքացում կամ իսլամացում: Հարկ է փաստել, որ զուգահեռաբար կիրառվում էր նաև բռնի սունիականացման գործընթացը, որը, անշուշտ, անհամեմատելի էր սոսկ իսլամացման հետ: Զանգվածային իսլամացման միջոցներից էր բավականին համակողմանի ուսումնասիրված «*դևշիրմեն»* (հավաքագրում), որը հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում է «մանկաժողով» անվամբ. քրիստոնյա հպատակներից պարբերաբար երեխաներ էին հավաքագրում և իսլամացնում՝ ենիչերների շարքերը համարելու համար: Հավաքագրում էին ոչ միայն տղաների, այլև աղջիկների, ինչը հայկական սկզբնաղբյուրներում ստացել է «աղջիկների ահ» անվանումը[1]: Կանանց և աղջիկների առևանգումները ու բռնի ամուսնությունները գագաթնակետին հասան XIX դ.:

Օսմանյան արհեստավորական միությունները եղել են իսլամացման մեկ այլ գործուն միջոց: Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի արհեստավորական կազմակերպությունները հայկական գրավոր սկզբնաղբյուրներում անվանում էին *ասնաֆ* կամ *էսնաֆ*, իսկ Արևելյան Հայաստանի, Կովկասի և Պարսկաստանի նմանօրինակ կազմակերպությունները՝ համքարություններ[2]: Մաշտոցի անվան Մատենադարանի, թիվ 446 ձեռագրի 1541 թվականի մի հիշատակագրության մեջ, գրված են հետևյալ տողերը. «*Յիշատակ է սուրբ Աւետարանս սօլկար ասնաֆին, ձեռամբ ուսթայ Ակխասին*»… Հիշատակագրության մեջ նշված «սօլկար ասնաֆ»-ը՝ մաշիկ կարողների համքարությունը[3]: Ամենայն հավանականությամբ սօլկարների այս համքարությունը եղել է հենց ձեռագրի գրչության վայրում՝ Բերկրի քաղաքում: Եվրոպացի ճանապարհորդ Ժ. Բ. Շարդենը 1692 թ. անդրադառնալով Պարսկաստանի համքարություններին՝ նշում է նաև էջմիածնի զանգակատան 1683 թ. արձանագրության մասին, ըստ որի՝ Թիֆլիսի արհեստավորները, համախմբված համքարության մեջ, պարտավորված են եղել էջմիածնին մոմ տալ՝ ամեն մի խանութից տարեկան մի քառորդ[4]:

Անիում Շապադինի թողած մի արձանագրության մեջ, որը վերաբերում է 1348 թ., հիշատակվում է Գտակկարոց թաղի մասին: Արջո-Առիճի անթվակիր արձանագրության մեջ հիշատակում է *փոլկարարոց* և *սառաճ փողոցը:* Պահպանված են տեղեկություններ կոշկակարների, դարբինների, պայտապանների փողոցների մասին, արհեստավորական թաղամասեր կային Հայաստանի բոլոր քաղաքներում՝ Էրզրումում, Խլաթում, Վանում, Կարսում[5]:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնել Օսմանյան կայսրությունում գոյություն ունեցող արհեստակցական միությունների (ասնաֆ/էսնաֆ) և կրոնական կազմակերպությունների ուղղակի կապը և դրանց դերն ու ակտիվ մասնակցությունը հայ արհեստավորների իսլամացման գործում:

Օսմանյան արհեստավորական կազմակերպությունները կամ, ինչպես վաղ շրջանում դրանք ընդունված է եղել անվանել, ֆութուվվաթները, կրոնական և հասարակական հիմքերի վրա կառուցված միավորումներ էին, որոնք միաժամանակ լինելով յուրօրինակ առևտրաֆինանսական կառույցներ և պետության համար հավելյալ եկամտի աղբյուր, մեծ դերակատարում են ունեցել Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում: Յուրաքանչյուր նման միավորում ուներ իր վարպետները, աշխատավորները, աշակերտները: Ֆութուվվաթը, ըստ էության, սահմանվում է որպես մուսուլմանական ասպետության տեսակ և նշանակում է հերոսություն, ասպետություն, ազնվություն, արժանապատվություն, ըստ մեկ այլ տարբերակի՝ *ֆաթա* արաբերեն նշանակում է *երիտասարդ*:

Արհեստավորական միությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար թերևս հարկ է կատարել մի փոքր պատմական ակնարկ դրանց ստեղծման և գործունեության վերաբերյալ: Ինչպես նշում է Զ. Յ. Հերշլագը, իսլամական արհեստավորական միավորումների նախնական օրինակների մասին տեղեկություններ կան դեռևս IX-X դդ.:

---

[1] Տե՛ս Կամախեցի Գ., Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 8:
[2] Տե՛ս Անասյան Հ., Թուրքական Ֆութուվվաթը և հայերը, Անթիլիաս, 1994, էջ 225-226:
[3] Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1316:
[4] Տե՛ս Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում IV-XVIII դդ. Երևան, 1956, էջ 125:
[5] Մանրամասն տե՛ս Աբրահամյան Վ., Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX-XIII դդ., Ե., 1946, էջ 128, Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Ե., 1958, էջ 50:

Սույն միավորումները հիմնականում կազմավորվում էին հետապնդելով երկու նպատակ՝ վերահսկել շուկան և հոգալ քաղաքաբնակ աշխատավորների կարիքները[1]:

XI-XII դդ. սկսվեց ռեսուրսների և ունեցվածքի կուտակում առանձին անհատների ձեռքում: Արհեստավորական միավորումները արտահայտում էին հասարակության մեջ առկա տնտեսական ու քաղաքական դժգոհությունները և արդյուքում, նույնականացվեցին իսլամական աղանդավորական շարժման հետ: Հետևաբար սունիական իշխանության ներքո սույն կազմակերպությունները աստիճանաբար կորցրեցին իրենց երբեմնի իշխանությունը[2]:

Այնուամենայնիվ, եղբայրության և միաբանության հիմնական ընկալումները, որոնք դրվեցին իսլամական արհեստավորական միավորումների հիմքում, շարունակեցին գոյատևել ֆութուվվաթի ավանդույթների ներքո[3]: Քաջ գիտակցելով արհեստավորների մեծ դերակատարումը պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում՝ սելջուկները, իսկ այնուհետև՝ օսմանյան սուլթանները, տեղահանում էին արհեստավորներին և վերաբնակեցնում նոր նվաճված քաղաքներում[4]: Արհեստները Փոքր Ասիայում ծաղկում էին: Այս թեմայի մասին հարուստ տեղեկություններ կան պահպանված Իբն Բատուտայի օրագրություններում[5]:

Հարկ է նշել, որ արհեստները Փոքր Ասիայում շատ տարածված էին դեռևս սելջուկների հայտվելուց առաջ, բնականաբար, դրանցով զբաղվող հիմնական զանգվածը քրիստոնյաներն էին՝ հայերը և հույները: Նույնիսկ «արհեստավոր» բառի բնորոշման համար թուրքերը օգտագործում էին արաբապարսկական փոխառյալ բառեր: Քրիստոնյաների ձեռքում էին կենտրոնացված հիմնականում այն արհեստները, որոնք պահաջում էին մեծ արհեստավարժություն, օրինակ՝ նկարչությունն ու քանդակագործությունը, իսկ հայերի ձեռքում՝ նաև արծաթագործությունը, պղնձագործությունը և ոսկերչությունը[6]: Սա ամենևին չի նշանակում, որ այս արհեստներով չէին զբաղվում թուրքերը, սակայն արհեստավարժություն պահանջող աշխատանքները միշտ վստահվում էին քրիստոնյաներին և նրանք ավելի բարձր էին վարձատրվում[7]: Ուստի նախնական փուլում ֆութուվվաթները կազմվում էին ի հակակշիռ տեղացի արհեստավորների:

Ֆութուվվաթներ կային նաև մինչիսլամական շրջանում, որոնք լայնորեն տարածված էին աշխատավորների շրջանում: Իսլամի տարածումով ֆութուվվաթների անդամները ընդունեցին իսլամը՝ պահպանելով *թասավվուֆի* (թասավվուֆ կամ սուֆի իսլամում հավատացյալ մուսուլմանի համար՝ Աստծուն հասնելու հատուկ առեղծվածային կենսակերպ) աշխարհընկալումը իսլամի հիմքի վրա: *Սուֆիները* (աստվածահաճո, կրոնական առեղծվածային կենսակերպին հետևող անձ) օգտագործում էին ֆութուվվաթը նվիրումի և ազնվության համատեքստում, ինչը նրանց մեկնաբանությամբ նշանակում էր հավատարմություն Ալլահին և մեծահոգություն այլոց նկատմամբ: Ֆութուվվաթի գաղափարախոսությունը նման կերպ էր մեկնաբանվում, որպեսզի ապահովվեր արհեստակացական միավորումների հոգևոր աջակցությունը: Որոշ հեղինակներ ֆութուվվաթը մեկնաբանում էին որպես սուֆիական մեծ ճանապարհի արահետ, որն ընտրում էին նրանք, ովքեր ի վիճակի չէին անցնելու առեղծվածային ամբողջ ուղին՝ թարիքաթը (արաբ.՝ ճանապարհ, թասավվուֆում դեպի Աստված տանող ամբողջ ուղին)[8]: Ֆութուվվաթ եղբայրությունները երբեմն անց էին կացնում սեփական սուֆիական ծիսակարգը, ինչը հետագայում ստացավ իր զարգացումը: Սուֆի ուսուցիչները դառնում էին նրենց ղեկավարները: Ուշ միջնադարում ֆութուվվաթները դարձան հիմնականում արհեստավորական միավորումների սուֆիական արտահայտումը[9]:

---

[1] Տե՛ս Harshlag Z. Y., Introduction to the Modern Economic History of the Middle East, Leiden, Brill, 1980, p. 20.
[2] Տե՛ս Bernard L., The Islamic Guilds, “Economic History Review”, 1937, N 8, p. 20-37.
[3] Տե՛ս Çağatay N., Bir Türk Kurumu Olan Ahilik, Ankara TTK, 1989, s.187.
[4] Տե՛ս Jos. Von Hammer-Purgstall, Geschichte des Osmanischen Reiches, Pesth, 1834, Bd. II, S. 89.
[5] Տե՛ս The Travels of Ibn Battuta, A. D. 1325-1354, tr. by H. A. R. Gibb, vol. II, Cambridge University Press, 1962, pp. 419-420.
[6] Տե՛ս Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань, 1930, с. 161; Goshgarian R., Opening and closing: Coexistence and Competition in Associations Based on Futuwwa in Late Medieval Anatolian Cities, “British Journal of Middle Eastern Studies”, 40 (1), 2013 p. 47.
[7] Bernard L., նշվ. աշխ., էջ 50
[8] Տե՛ս AnaBritannica, Genel Kültür Ansiklopedisi, cilt 29ö s. 250-251.
[9] Տե՛ս Harmancı M., Fütüvvet-Melamet İlişkisi, Alevelik Araştırmaları Dergisi,2011,S. 2, s. 117-124.

Ըստ սուֆիների՝ ֆութուվվաթը մարգարեի, Ալլահի կողմից ավանդված, պատվով և արդարությամբ առաջնորդվելու սկզբունքների շարք էր: Պատիվն ու արդարությունը համարվում էին տղամարդկանց արժանիք, որով օժտված էին Ալլահը, մարգարեն և նրա գաղափարակիցները:

Ժամանակի ընթացքում ֆութուվվաթը մանրամասն մշակվելով առավել խորացրեց իր հոգևոր ուղղվածությունը, որի ազդեցությունը այս ամենի հետ մեկտեղ չսահմանափակվեց միայն հոգևոր և միստիկ ոլորտներով, ինչպես դա տեղի ունեցավ սուֆիական որոշ ճյուղերի հետ: Ճիշտ հակառակը, ֆութուվվաթի բոլոր անդամները շատ ակտիվ դերակատարում ունեին հասարակական կյանքում, ներխուժելով բոլոր ոլորտները[1]:

Ֆութուվվաթը, ինչպես նշեցինք, շատ խորը արմատներ ուներ միջնադարյան համքարությունների և արհեստակցական միավորումների շրջանում՝ ամբողջովին ողողելով դրանք իրենց հոգևոր գաղափարախոսությամբ: Բացի այդ, սուլթանության ընդլայնումով ֆութուվվաթը տնտեսական կյանքից բացի սկսեց ակտիվ ներգրավվել նաև երկրի քաղաքական կյանքում: Շատ կարևոր է նշել, որ ֆութուվվաթի ներուժը օգտագործվում էր ամբողջ մուսուլմանական հասարակության անվտանգությունը ապահովելու համար[2]: Այսպիսով պատկանելով միաբանությանը՝ ֆութուվվաթներն ամբողջովին արտացոլում էին իսլամի գաղափարները և այդ գաղափարներին հավատարիմ ծառայելու ուղին[3]:

Տարածվելով ամբողջ իսլամական աշխարհում՝ ֆութուվվաթ եղբայրությունը վերջնականապես միավորվեց XIII դ. սկզբին և պաշտոնապես ճանաչվեց Աբբասյան խալիֆ Նասիրալ Դին Լիլլահի կողմից, ով մտերիմ հարաբերությունների ուներ իսլամ միստիկ և ֆութուվվաթի գրող Շուհրավարդի հետ[4]: Սրանով ֆութուվվաթները ձեռք բերեցին կարևոր նշանակություն և XI-XII դդ. գերակշռում էին բոլոր արհեստակացական միություններում:

Ֆութուվվաթները այս կամ այլ կերպ շատ մեծ դերակատարում են ունեցել Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում մուսուլմանական ուսմունքների տարածման գործում, հատկապես IX դ., երբ դրանք հանդես էին գալիս որպես կամավորական համքարություններ: Խալիֆ Նասիրը այս կազմակերպությունները նույնացնում է եվրոպական ասպետության հետ[5], խալիֆի այս մոտեցումը ունեցել է երկու նպատակ. նախ՝ ուժեղացնելու Աբբասյանների ազդեցությունը, երկրորդ՝ մեղմելու սունի և շիա ուղղությունների հետևորդների միջև առկա լարվածությունը[6]: Ըստ այդմ, բավական վիճարկելի է այն տեսակետը, թե արդյո՞ք այդ կազմակերպություններն ասպետության հետ որևէ աղերս ունեին թե ոչ: Ակնհայտ է մի բան՝ ի տարբերություն արևմտյան ֆեոդալական միությունների՝ ֆութուվվաթների միակ նպատակը ոչ թե սոցիալ-տնտեսական բարեկեցությունն էր, այլ *dar-ul Islam* և *dar-ul harp* գաղափարախոսության (իսլամական աստվածաբանների կողմից տարածքների աշխարհագրական տարանջում ըստ կրոնական հատկանիշի՝ *dar-ul Islam -իսլամական տարածքների համար կիրառվող եզրույթ, dar-ul harp-իսլամի ազդեցությունից դուրս՝ պատերազմի տարածք*) տարածումը:

Ֆութուվաթթի էությունը և գաղափարախոսությունը ճիշտ հասկանալու համար կարևոր է նաև պարզել նրանց կապը եղբայրական միաբանությունների՝ հիմնականում ախիության և բեկթաշիության հետ:

Չնայած այն փաստին, որ *ախիները* և ֆութուվվաթն ամբողջովին նույնը չեն, այնուամենայնիվ, ախիները ֆութուվվաթի սոցիալ-տնտեսական և կրոնական ուղղվածությունների հիմնական շարունակողներն են: Ախիները հիմնվում էին *ֆութուվվաթնամների* վրա՝ որպես հիմնական ուղեցույց իրենց անդամների համար, և որդեգրել էին սուֆիզմի գաղափարախո-

---

[1] Տե՛ս F. Taescher, İslam Ortaçağında Fütüvvet Teşkilatı İstanbul Üniversitesi İktisat Fakültesi Mecmuası, 1953, s.3-32.

[2] Տե՛ս Мамажанов Н., Феномен рыцарства в исламе, “Современная молодежь и духовные ценности народов России”, Казань, 2019, с. 31-36.

[3] Անասյան Հ., նշվ. աշխ., 229:

[4] Տե՛ս Todd A., The Noble Traders: The Islamic Tradition of “Spiritual Chivalry” (futuwwa) in Bosnian Trade Guilds (16th-17th Centuries), “Muslim World 97”, 2007, p. 159-173.

[5] Տե՛ս Armakis G., Futuwwa Traditions in the Ottoman Empire Akhis, Bektashi Dervishes, and craftsmen, “Journal of Near Eastern Studies”, 1953, Vol. 12, N 4, p. 232-247.

[6] Տե՛ս Taeschner, Islamisches Ordensrittertum zur Zeit der Krueuzzuge, “Die Welt als Geschichte”, 1938, Bd. IV, s. 403.

սությունը[1]: Իբն Բատուտան որպես *ախիների* գործունեության երեք հիմնական ուղղություններ մատնանշում է կրոնական, սոցիալ-տնտեսական և քաղաքական ոլորտները: Հարկ է նշել, որ ստեղծված աշխարհաքաղաքական իրողության պայմաններում այս երեք ուղղությունները ոչ մի ձևով հնարավոր չէ տարանջատել և խմբային գիտակցության մեջ դրանք միմյանց հետ սերտաճած էին: Օրինակ, երբ թյուրքական ցեղերը նվաճում էին քրիստոնյա ժողովուրդներին, կրոնական հարցը դառնում էր գերակա, դա հիմք է տալիս ենթադրելու, որ *ախիները կոչված* էին տարածել իսլամը: Երբ ախիները ձեռնամուխ եղան զենքի ուժով պաշտպանելու իսլամը, այդժամ վերածվեցին զինվորականների, իսկ կենտրոնական իշխանության թուլացման կան իսպառ վերացման ժամանակ, նրանք հանդես էին գալիս որպես քաղաքական ուժ: *Ախիները* ստանձնեցին արհեստավորների շահերի պահպանման գործառույթը[2]:

Ախիների ծագման մասին ստույգ տվյալներ չկան: Նրանք ներխուժել էին Փոքր Ասիա՝ երազելով զինվորական փառքի մասին: *Ախի* եղբայրական միաբանության անդամները չէին ամուսնանում, զբաղվում էին առևտրով, ունեին իրենց առաջնորդը և նրան էին տալիս իրենց ամբողջ աշխատավարձը, որն ուղղվում էր նրանց կարիքներին[3]: Ախիական եղբայրության անդամները մասնակցում էին նվաճումների, կատարում էին հետախուզական աշխատանքներ, զինվորական արշավանքների ժամանակ զորքին մատակարարում էին անհրաժեշտ ապրանքներ[4]: Գոյություն ուներ Օսմանյան պետությանը պատկանող և իրենց *"ehl-i hiref"* անվանող, արշավանքներին բանակը ուղեկցող և արշավանքների ժամանակ բանակի կարիքները հոգացող միավորում:

XIII-XIV դդ. Փոքր Ասիայում ախիները դարձան ֆութուվվաթի գաղափարախոսության կենսագործման ամենաազդեցիկ հենքը: Ըստ Օ. Նուրիի՝ ախիները Օսմանյան պետության հիմնումից հետո իրենց գոյությունը պահպանեցին կաշեգործների և թամբագործների միավորումների թևով: Արհեստավորական միավորումներում կամ ֆութուվվաթում ախիները գերակշռող դիրք ունեին, ուստի ֆութուվվաթի աստիճանավորման մեջ նրանք, գրավելով ղեկավար շեյխերից հետո առաջին տեղը, վերջիններիս տեղակալներն էին և այս առումով խալիֆներ էին կոչվում[5]: Պակաս կարևոր չէ այն փաստը, որ ախիական կազմակերպությունը արհեստավորների մի սովորական կազմակերպություն չէր, այլ՝ պարզապես այդ խավի վրա հենվող, իր դավանական ուսմունքը դրա միջոցով տարածող մի թարիկաթ (միաբանություն)[6]: Ինչպես նշում է Ֆ. Դուրգունը, ախիները իրենց շարքերն էին ընդունում նաև քրիստոնյաներին, հրեաներին և կազմակերպում վերջիններիս դավանափոխության գործընթացը[7]: Սկզբնական շրջանում ախիների միաբանության մեջ ներառված էին միայն կաշեգործները, սակայն հետագայում միաբանության մասնաճյուղի թիվը հասավ 32-ի՝ ներառելով նաև այլ արհեստավորական միությունները: Այս միաբանությունները գործում էին յուրաքանչյուր քաղաքում, ախիները տնտեսապես անկախ էին, նրանք էին շնորհում արհեստով զբաղվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր, վերահսկում էին ապրանքների ներկրումը և արտահանումը, դրանց որակը: Թեև ախիները բացահայտ համակրանք էին տածում օսմանյան իշխանության նկատմամբ, այնուամենայնիվ, XV դ. կենտրոնական իշխանության ամրապնդմանը զուգահեռ, նրանք կորցրեցին իրենց քաղաքական կարևորությունը՝ ճանապարհ բացելով օսմանյան արհեստակցական միավորումների (guilds) համար: Ըստ Գ. Արնակիսի՝ ախիական միաբանությունները իրենց գործունեությունը այս կամ այն կերպ շարունակել են ընդհուպ մինչև XVIII դ.[8]:

Ինչ վերաբերում է *բեկթաշիության* հետ կապին, ապա այստեղ աղերսներն անուղղակիորեն կապված են ախիական և բեկթաշիական միաբանությունների միջև գոյություն ունե-

---

[1] Տե՛ս Köksal F., Ahi Evran ve Ahilik, Kırşehir, 2006, s. 60-67.
[2] Տե՛ս Dilaver S., Fütüvvet ve Ahilik Teşkilatlarının Ahlaki İlkelerinin Oluşmasında Tasavvufun Öncülüğü, İhya Uluslararası İslam Araştırmaları Dergisi, C. 2, S. 1, 2016, s.1-37
[3] Տե՛ս The Travels of Ibn Battuta,, p. 262.
[4] Տե՛ս Refik Soykut, Orta Yol Ahilik, Güneş Matbaacılık T.A.Ş., Ankara 1971, s. 131:
[5] Տե՛ս Tarim C. H., Kirsehir-Gülsehri ve Bailer-Ahiler-Bektaşiler, Istanbul, 1948, s. 145-146.
[6] Տե՛ս Անասյան Հ., նշվ. աշխ., էջ 228:
[7] Տե՛ս Durgun F., A Comparision of Medieval European Guilds and Akhism in Anatolia 2009, S. IV, 1-16, p. 12:
[8] Տե՛ս Arnakis G., Futuwwa Traditions in the Ottoman Empire Akhis, Bektashi Dervishes, and Craftsmen, "Journal of Near Eastern Studies",p. 223-247.

ցող ընդհանուր սովորույթներով և ծիսակարգերով, օրինակ՝ ֆութուվվաթի նոր անձի մուտքի ընդունելության արարողակարգի մեջ հիշատակվում է ամուրիների աղոթք (մուճարրադ դուա) արարողակարգը, որը *բեկթաշիների* թարիքաթի առաջին աստիճանն է:

Ըստ Հ. Անասյանի կողմից մանրամասն ուսումնասիրված ձեռագրի՝ ոչ մուսուլմանի՝ արհեստավորական միավորումներին անդամացելու արարողակարգը ընթանում էր հետևյալ կերպ. արհեստով զբաղվելու համար յուրաքանչյուր ոք պարտավոր էր դիմել ֆութուվվաթին, այսինքն շեյխին՝ ընծաներով և պարգևներով և, իբրև արհեստավոր, օրինական հաստատում ստանալ, հակառակ դեպքում արհեստավորի վաստակը համարվելու էր անթույլատրելի և անընդունելի (haram): Յուրաքանչյուր *մուհիբ (սիրողական մակարդակով արհեստով զբաղվող անձ)* պետք է ներկայանար իր վարպետի կամ ծնողի հետ, այնուհետև այդ վարպետի թույլտվությամբ պետք է ընտրեր *յոլ-ուսթա*, այսինքն թարիքաթական վարպետ և մաս կազմեր *նազիլների*՝ ֆութուվվաթի ներքին աստիճանավորումներից առաջինի խմբին: Նկարագրության մեջ նշվում է, որ *մուհիբը* դիմում է շեյխին և խնդրում նրա օրհնությունը: Տեղի է ունենում կրոնական արարողություն, որի հայ աշակերտը ձեռք էր բերում արհեստակցական կազմակերպության անդամակցելու իրավունք, մինչև որ տեղի կունենար *շադդի* կամ *փեշթամալի* (թարիքաթական վարպետի կողմից աշակերտի գոտկատեղին կապվող գոգնոց) արարողակարգը, ինչը նշանակում էր, որ աշակերտը հասել է կազմակերպության սկզբնական աստիճաններից երրորդին՝ *սահիբ թարիկների* շարքին, այն է՝ նախկին անստույգ և անիրավական վիճակից անցնում է իրավական մի կարգավիճակի և դառնում ֆութուվվաթի լիարժեք անդամ: Սակայն նախքան այս քայլը կամ արարողությունը հային պետք է ենթարկեին բաշկա հանելու (թուրք. başka - այլ, ուրիշ)[1], այսինքն *ուրիշը դարձնելու* ծիսակարգին, որպեսզի նա կարողանար հասնել իր մուսուլման արհեստակիցներին[2]:

Բաշկա հանելու պաշտոնական հաստատումը տեղի էր ունենում *ռեվանլըկ* կամ *ըրաւանլուխ* կոչվող իրադարձության ժամանակ, որը ենթադրում էր կրոնական ծիսակարգ, որի ընթացքում պաշտոնապես հաստատվում էր աշակերտին կամ նորահաս արհեստավորին բաշկա հանելու (ուրիշ դարձնելու) փաստը: Ոչ մուսուլման անդամները ստիպված էին սերտել իսլամական բազմաթիվ աղերսանքներ (թերջումաններ), որոնք պարտադիր էին կրոնական ծիսակատարության ժամանակ, ընթերցվում էր Ղուրանը, արվում մարգարեների և սրբերի պատմություններ, կրոնական և հոգևոր զրույցներ, որից հետո երկար աղոթք: Աշակերտը պետք է ներկայանար պատշաճ նվերներով: Ըստ մեր ուսումնասիրած ձեռագրի՝ հայը հանդես էր գալիս առանց *նակիբի* (անձ, ով պատասխանատու էր հավաքույթների հրավիրման և ղեկավարման համար): Հայ խնդրարկուն անձամբ է կատարում նվերների մատուցումը, ի տարբերություն իսլամ դավանողների, որոնց նվերները մատուցում է նակիբը:

Ըստ ընդունված կարգի՝ նակիբը աշակերտին ներկայացնում էր շեյխի՝ հայտնելով, որ երկար տարիներ աշակերտել է իր վարպետին, արժանացել թույլտվության, հայտնում էր ժողովականների հավանությունը, այնուհետև առաջ է գալիս աշակերտի վարպետը և շեյխի դիմաց հավանություն տալիս: Նույնն է անում նաև միավորման նակիբը, շեյխի թույտվությունը արտահայտվում էր աղոթքով, որից հետո կատարվում էր *շադդի* կամ *փեշթամալի* արարողությունը: Համապատասխան արհեստի նակիբը վերցնում է *ֆութա փեշթամալը*, երկայնքով ծալում այն հինգ անգամ. սա նշանակում էր հինգ պահ նամազի, հինգ Ալ-ի Աբայի (Մուհամմադ, Ալի, Ֆաթիմա, Հասան, Հուսեյն), հինգ նահապետների (Նոյ, Աբրահամ, Մովսես, Հիսուս, Մուհամմադ), իսլամի հինգ հիմունքների (Աստծո միակություն, հրեշտակների դաս, երկնային ծագում ունեցող գրքեր, մարգարեների դաս, վերջին դատաստանի օր), այնուհետև ևս երեք անգամ ծալում է լայնքով՝ խորհրդանշելով շարիաթ (իսլամական օրենք), թարիքաթ (կրոնական, միաբանական ուխտ), հաքիքաթ (ճշմարտություն): Այնուհետև այս ֆութան դառնում էր քառանկյուն, իսկ դրանից հետո դեպի ներս էին շրջում նրա վրայի ծալքի չորս անկյունները, ի նշան՝ աշխարհի չորս կողմերի, չորս փիրերի (Ադամ, Նոյ, Աբրահամ, Մուհամմադ), չորս թաքբիրի(մարգարեներին նվիրված աղոթք), չորս ընտրյալների (Մուհամմադին հաջորդած խալիֆներ՝ Աբուբաքր, Օմար, Օսման, Ալի), չորս հրեշտակապետերի (Գաբրիել, Միքայել, Ազրայիլ, Իսրաֆիլ), չորս երկնային գրքերի՝ (Մովսեսի հնգամատյան, Դավթի Սաղմոսարան,

[1] Տե՛ս Баскаков А. Н., Турецко-русский словарь, Москва, 1977, с. 100.
[2] Տե՛ս Անասյան Հ., նշվ. աշխ., էջ 239:

Ավետարան, Ղուրան): Դրանից հետո ֆութայի վրա դրվում էր մի քար և կշիռ, թեև սա փոփոխական էր ըստ արհեստների[1]:

Ըստ դրա՝ հայն արժանանում է Մուհամմադի և Ալիի ձեռքերի շոշափման ենթարկվելու կրոնական և առեղծվածային իսլամական արարողակարգին, որն ամենանվիրականն էր ֆ-ին պատկանող արհեստավորի կյանքում: Հայ արհեստավորների պարագայում կար մի ուշագրավ արարողակարգ, ըստ էության, կրոնափոխության ուղղակի թելադրանք էր, որի ընթացքում հայ արհեստավորը շեյխ սաաբայի թելադրանքով երեք անգամ կրկնում էր «Արի՛ մուսուլման դարձիր» արտահայտությունը, որը իսլամ դավանողի համար փոխարինվում էր պարզապես «մուսուլմա՞ն ես» հարցով: Շեյխ սաաբան կրոնափախության այդ թելադրանքն անում էր որպես խրատ և իր խոսքն ավարտում էր ծիսական ապտակով: Այս ձևով ավարտվում էր հայի իսլամացման գործընթացը, հայ արհեստավորին մնում էր միայն արտասանել շնորհակալության *թերջումանը* և մատուցել կերուխումի արարողակարգը, որին մասնակցում էին *բաշկա հանված* հայ արհեստավորները[2]:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Օսմանյան կայսրությունը, իր գոյության պատմության տարբեր ժամանակահատվածներում մշակել և իրականացրել է ոչ մուսուլման բնակչության ուծացման և ձուլմանն գործողություններին ուղղված մի անբողջ սոցիալական փաթեթ:

Ձուլման քաղաքականության բոլոր բաղադրիչները չափազանց միահյուսված էին և այս համատեքստում արհեստավորական միավորումների դերը կայսրության սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական կյանքում դժվար է գերագնահատել: Ֆութուվվաթի համակարգը վայելում էր բացառիկ ինքնավարություն ներքին հարցերի կարգավորման գործում և գրեթե անմասն էր մնում Օսմանյան կայսրության քաղաքական վայրիվերումներից: Ֆութուվվաթներն ամբողջովին տնօրինում էր տնտեսական կյանքը, շուկան, շնորհում արհեստով զբաղվելու հավաստագրեր, վերահսկում ապրանքների որակը՝ ստեղծելով ծանր կացության պայմաններ ոչ-մուսուլման տեղացի բնակչության համար, քանի որ ֆութուվվաթին անդամակցելու և հետևաբար արհեստով լիարժեք զբաղվելու իրավունք ձեռք բերելու հիմնական նախապայմանը դավանափոխությունն էր: Ներկայումս թուրք պատմագրությունը բռնի ուծացման այս եզակի փաստերը ներկայացնում է որպես կամավոր հիմքերի վրա տեղի ունեցող զանգվածային երևույթներ, մինչդեռ դաժան սոցիալ-տնտեսական իրադրության պայմաններում դավանափոխությունը ընկալվում էր որպես միակ ելք: Միաժամանակ ներկայումս օսմանյան Ֆութուվվաթները ներկայացվում են որպես ասպետության տեսակ՝ նույնականացնելով այն եվրոպական ասպետության հետ, այնինչ Ֆութուվվաթը աբողջովին ողողված էր իսլամական գաղափարախոսությամբ: Օսմանյան պետության վաղ փուլում որդեգրած բռնի ուծացման քաղաքականությունը հետագայում քրիստոնյա բնակչության ֆիզիկական բնաջնջմանն ուղղված սոսկ նախաքայլեր էին և ինչպես ցույց կտա հետագայում դեպքերի զարգացումը, Հայոց ցեղասպանության կառուցվածքային ամենագլխավոր բաղադրիչներից մեկը:

Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА). На протяжение всей истории Османской империи проводилась политика последовательной принудительной исламизации христианского населения. Современная турецкая историография избегает упоминания о тяжелых экономических, политических, социальных и моральных условиях, в которых на “добровольной основе” происходили эти события. Широко распространеные братства Футувва и Ахи изображены как аналог европейского рыцарства. Эти организации, обладая большой политической, социальной и религиозной властью, напрямую принуждали принимать ислам или косвенно проводили политику физического истребления христианского населения.

[1] Տե՛ս Անասյան Հ., նույն տեղում:
[2] Տե՛ս Անասյան Յ., Թուրքական Ֆութուվվաթը և հայերը, Անթիլաս-Լիբանան, 1994, 235-248:

Ключевые слова: Османская империя, принудительная исламизация, османское футувва, ассимиляция, Братство Ахи.

Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC.). During the whole history of Ottoman Empire a policy of consecutive forced islamization was implemented. In every stage of this policy various methods and techniques were used: including involving the ordinary Muslim population. Modern Turkish historiography avoides mentioning the harsh economic, political, social and moral conditions and represents those occurrences on a volunteer basis. Simultaneously, widely spread Futuwwa and Akhi brotherhoods are depicted as an analog of European chivalry. On the other hand, these organizations concentrated at their hands a lot of political, social, and religious power and accordingly lead Christian population to convert Islam which was the prerequisite of the physical extermination policy.

Key words: Ottoman Empire, force islamization, Ottoman Futuwwa, assimilation, the Akhi brotherhoods.